ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ԿԱՊԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ N 79-Ա
26 ՀՈՒՆԻՍԻ 2024թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԿԱՊԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1–ին մասի 42-րդ կետով, «Ընկերությունների կողմից վճարվող բնապահպանական հարկի նպատակային օգտագործման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 4-րդ հոդվածի 4-րդ կետով, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի օգոստոսի 24-ի N 1421-Ն որոշման և հաշվի առնելով Կապան համայնքի ղեկավարի առաջարկությունը, **Կապան համայնքի ավագանին որոշում է.**

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Կապան համայնքի 2025 թվականի բնապահպանական ծրագիրը՝ ընդհանուր 234 098 470 ՀՀ դրամ արժողությամբ, այդ թվում՝ բնապահպանական միջոցառումների մասով – 233 298 470 ՀՀ դրամ և առողջապահական միջոցառումների մասով – 800 000 դրամ, համաձայն հավելվածի:

2. Առաջարկել համայնքի ղեկավարին օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետներում հաստատված ծրագիրը ներկայացնել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետի աշխատակազմ՝ Հայաստանի Հանրապետության շրջակա միջավայրի նախարարություն ներկայացնելու և պետական ֆինանսների կառավարման բնագավառում Հայաստանի Հանրապետության կառավարության լիազոր պետական մարմնի միջոցով 2025 թվականի պետական բյուջեի նախագծում ընդգրկելու համար:

Կողմ(18)՝

ԳԵՎՈՐԳ ՓԱՐՍՅԱՆ _____
ԱՆՈՒՇ ՄԵԺԼՈՒՄՅԱՆ _____
ԳՈՌ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ _____
ԶՈՐԱՅՐ ԳԱԼՍՏՅԱՆ _____
ՎԱՀԱՆ ՂԱԶԱՐՅԱՆ _____
ՅՈՒՐԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ _____
ԱՆԺԵԼԱ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ _____
ԱՐՇԱԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ _____

ՀԱՍՄԻԿ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ _____

ԱՐՏՅՈՄ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ _____

ՍՈՆԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ _____

ԱՐՏԱԿ ԽԱՉԱՏՐՅԱՆ _____

ԱՐՄԵՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ _____

ՀԵՐՄԻՆԵ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ _____

ԱՐԹՈՒՐ ԳԵՎՈՐԳՅԱՆ _____

ՆԱՐԻՆԵ ԳՐԻԳՈՐՅԱՆ _____

ԱՐՄԻՆԵ ՄԱՆՈՒԿՅԱՆ _____

ՍԱՄՎԵԼ ՍԱՐԳՍՅԱՆ _____

Դեմ (0)

Ձեռնպահ (0)

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ _____ ԳԵՎՈՐԳ ՓԱՐՍՅԱՆ

2024թ. հունիսի 26

ք. Կապան

Հավելված
Կապան համայնքի ավագանու
2024 թվականի հունիսի 26 -ի թիվ 79-Ա որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ

ԿԱՊԱՆ ՀԱՄԱՅՆՔ

Ծ Ր Ա Գ Ի Ր

ԿԱՊԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ

ԿԱՊԱՆ – 2024

Ն Ա Խ Ա Բ Ա Ն

Կապան համայնքի 2025թ. բնապահպանական ծրագիրը կազմվել է «Ընկերությունների կողմից վճարվող բնապահպանական հարկերի նպատակային օգտագործման մասին» ՀՀ օրենքի /ՀՕ-188, 15.05.2001թ./, Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի օգոստոսի 24-ի <<Բնապահպանական ծրագրերով նախատեսված միջոցառումների իրականացման առաջնայնությունները կամ դրանց փոփոխությունները շրջակա միջավայրի ոլորտի և առողջապահության ոլորտի լիազոր մարմինների հետ համաձայնեցման կարգը սահմանելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի սեպտեմբերի 26-ի N 1544-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին>> N 1421-Ն որոշման և Հայաստանի Հանրապետության շրջակա միջավայրի նախարարի 2023 թվականի սեպտեմբերի 04-ի <<Ընկերությունների կողմից վճարվող բնապահպանական հարկից մասհանվող գումարների հաշվին իրականացվող բնապահպանական ծրագրերի մշակման կարգը սահմանելու մասին>> N 310-Ն հրամանի պահանջներին համապատասխան:

1. **Ծրագրի նպատակը** – Ծրագրի իրականացման նպատակը գետի հունի ֆիզիկական աղտոտվածությամբ պայմանավորված՝ գետի էկոհամակարգի վրա քայքայիչ ազդեցության վերացումը, ջրի բնական հոսքի ապահովումն ու ջրի որակի բարելավումն է: Միաժամանակ տեղաշարժի անվտանգության ապահովման նպատակով նախատեսվում է հենապատերի հիմքերի ուժեղացում, հենապատերի ամրացում, վերանորոգում և վերականգնում, նոր հենապատերի կառուցում, նոր ճաղավանդակների տեղադրում, մայթերի և բազրիքների վերականգնում և վերանորոգում, կամուրջների կառուցում, լուսավորության համակարգի անցկացում, հաշմանդամություն ունեցող անձանց համար մատչելի պայմանների ապահովում և այլն: Սանիտարահիգիենիկ վիճակի բարելավման նպատակով նախատեսվում է կոյուղագծի կառուցում, քանի որ գետին հարակից անհատական բնակելի տների կոյուղագծերը միացված չէ քաղաքի ընդհանուր կոյուղագծին և թափվում է գետը:

Առողջապահական մասով, ծրագրի նպատակը Կապան համայնքի Արծվանիկ բնակավայրի բուժկետը և Սյունիք գյուղի նոր կառուցվող ՆՈՒՀ-ի բուժկետն անհրաժեշտ գույքով համալրելն է:

2. **Ծրագրի խնդիրները** – Կապանը Հայաստանի Հանրապետության լեռնահանքային արդյունաբերական կենտրոններից է: Պղնձի և բազմամետաղային հանքավայրի երկարամյա շահագործումը, շրջական տարածքներում իրականացված և իրականացող երկրաբանահետախուզական աշխատանքները, խոշոր պոչամբարների առկայությունը, հին հանքախորշերի փլուզման վտանգները, սողանքային ակտիվությունը, ժամանակին կատարված անտառների անկանոն հատումները, քաղաքի միջով անցնող և խոշոր բեռնատարների երթևեկությամբ ծանրաբեռնված միջպետական ավտոմայրուղին քաղաքի բնության և բնակչության առողջության համար էկոլոգիական մեծ ռիսկեր են պարունակում:

Կապան համայնքի 2025 թվականին նախատեսվում է շարունակել 2023 և 2024 թվականների ծրագրերը և կրկին ծրագիր իրականացնել Վաչագան գետի հունի մաքրման, բարեկարգման և կից ենթակառուցվածքների նորոգման հետ կապված: 2025 թվականին նախատեսվում է ընդգրկել Կապան քաղաքի Գարեգին Նժդեհի հուշահամալիրից մինչև Կապանի բժշկական կենտրոնի հարակից կամուրջն ընկած

հատվածը: Գետի հունի հիմնական տեսանելի աղտոտումը դրա ֆիզիկական աղտոտումն է մարդկային ակտիվ գործունեության և առատ տեղումների արդյունքում՝ վարարումների ժամանակ ջրաբերուկներով, կենցաղային աղբով /ապակյա և պլաստիկ շշեր ու այլ տարատեսակ պլաստիկ նյութեր, մետաղի ջարդոն/ և այլն, որը քայքայիչ ազդեցություն է ունենում գետի էկոհամակարգի վրա, ինչպես նաև ունի էսթետիկ և ակնադիտական /վիզուալ, տեսողական/ բացասական ազդեցություն: Ֆիզիկական աղտոտվածության պատճառով հոսքի արագության նվազման արդյունքում բազմապատկվում է ջրի որակի վատթարացման արագությունը: Գետի աղտոտվածությունը հանգեցրել է հունի մեջ ծառերի և թփերի աճման: Ծրագրի խնդիրը վերոնշյալ վիճակն է և ծրագրի իրականացմամբ միջոցներ են ձեռնարկվելու այն շտկելու ուղղությամբ:

Ծրագրի իրականացմամբ կլուծվի նաև նշված հատվածում կոյուղագծի խնդիրը, քանի որ ներկա պահին գետի այդ հատվածի առանձնատների կոյուղու համակարգը միացված չէ քաղաքի ընդհանուր կոյուղագծին և կոյուղաջրերը ուղղակի թափվում է գետի մեջ, ինչը թե բնապահպանական, և թե առողջապահական առումով մեծ վտանգ է ներկայացնում:

Այսպիսով, Կապան համայնքի 2025 թվականի բնապահպանական ծրագրի խնդիրը գետի հետ կապված բնապահպանական ռիսկերի մեղմելն է, մասնավորապես Վաչագան գետի՝ Գարեգին Նժդեհի հուշահամալիրից մինչև Կապանի բժշկական կենտրոն ընկած հատվածի հունի մաքրումը, հունի բարեկարգումը, հենապատերի կառուցումը, ամրացումը, վերանորոգումը, վերականգնումը, հիմքերի ուժեղացումը, մայթի և բազրիքների նորոգումը, նոր ճաղավանդակների տեղադրումը, կոյուղագծի կառուցումը և այլն:

Առողջապահական մասով, ծրագրի խնդիրը բուժկետներում անհրաժեշտ գույքի բացակայությունն է և ծրագրի իրականացմամբ ձեռք կբերվի անհրաժեշտ գույք Արծվանիկ գյուղի նոր վերանորոգված բուժկետի և Սյունիք գյուղի նախատեսվող ՆՈՒՀ-ի բուժկետի համար: Հարկ ենք համարում նշել, որ Արծվանիկ գյուղի բուժկետը վերանորոգվել է սուբվենցիայի ծրագրերի շրջանակներում՝ համայնք-պետություն համատեղ ֆինանսավորմամբ, իսկ Սյունիք գյուղի համար՝ 2025 թվականի սուբվենցիոն ծրագրերի շրջանակներում առաջարկվել է կառուցել նոր ՆՈՒՀ-ի շենք, որն իր մեջ կներառի նաև բուժկետ:

3. **Ծրագրի միջոցառումների իրականացման առաջնայնությունները** – Ընկերությունների կողմից վճարվող բնապահպանական հարկից մասհանվող գումարների հաշվին նախատեսվում է իրականացնել ծրագրի բնապահպանական մասը հետևյալ առաջնայնությամբ՝ գետի մաքրում ֆիզիկական աղտոտվածությունից՝ մոտ 730 մետր հատված: Մաքրման աշխատանքները նախատեսվում է սկսել մաքրման ենթակա հատվածի վերին մասից՝ մաքրման աշխատանքների ժամանակ նոր աղտոտվածությունից խուսափելու նպատակով: Կիրականացվեն նաև ափապաշտպան կառուցվածքների նորոգման, բարեկարգման, մայթերի և բազրիքների նորոգման, կոյուղագծի կառուցման և այլ աշխատանքներ:

Նշենք նաև, որ նշված հատվածից վերև կառուցված է 2 ջրավազան, որոնք հնարավորություն են տալիս որսալ գետաբերուկները՝ գետի հետագա աղտոտումը նվազեցնելու նպատակով:

Ծրագրի առողջապահական մասի միջոցառումները՝ Արծվանիկ գյուղի բուժկետի և Սյունիք գյուղի ՆՈՒՀ-ի բուժկետի կահավորումը և գույքի ձեռքբերումը, նախատեսվում է իրականացնել համայնքի բյուջեի միջոցներով:

4. **Ծրագրի արժեքը /ըստ միջոցառումների/** - Կապան համայնքի 2025 թվականի հաշվարկված 233 298 470 ՀՀ դրամը կուղղվի գետի հունի մաքրման և ափապաշտպան կառուցվածքների նորոգման, բարեկարգման, մայթերի և բազրիքների նորոգման և այլ աշխատանքներին: Համայնքապետարանը նախաձեռնել է նոր նախագծանախահաշվային փաստաթղթերի պատվիրման աշխատանքներ, քանի որ առկա նախագծանախահաշվային փաստաթղթերով մի շարք խիստ անհրաժեշտ աշխատանքներ ներառված չեն, այդ պատճառով հնարավոր չէ նշել նախատեսվող միջոցառումների հստակ գումարը: Եթե նախատեսվող աշխատանքների արժեքն ավել լինի բնապահպանական մասհանումների գումարից, մնացած գումարը կտրամադրվի համայնքի բյուջեից:

Առողջապահական միջոցառումն ամբողջությամբ նախատեսվում է իրականացնել համայնքի բյուջեի հաշվին, գումարը կազմում է 800 000 ՀՀ դրամ:

5. **Ծրագրի մշակման համար հիմք հանդիսացած հիմնախնդիրները** – Բնապահպանական մասով ծրագրի մշակման համար հիմք է հանդիսացել գետի հունի և ափապաշտպան ենթակառուցվածքների ներկայիս վիճակը: Հարկ ենք համարում նշել, որ նախատեսվող գետի հունի մաքրման և ենթակառուցվածների բարեկարգման աշխատանքների վերաբերյալ տարբեր հանրային քննարկումների վերաբերյալ հանրությունը բազմիցս տվել է դրական կարծիք:

Առողջապահական միջոցառումների մասով հիմնախնդիրը Արծվանիկի նոր նորոգված բուժկետի և Սյունիք գյուղի նոր կառուցվող մանկապարտեզի բուժկետի գույքի բացակայությունն է:

6. **Տեղեկատվություն համայնքի ազդակիր բնակավայրերի ու դրանց բնապահպանական կամ առողջապահական հիմնախնդիրների վերաբերյալ** – Կապան համայնքի ազդակիր բնակավայրերն են Կապան քաղաքը և Արծվանիկ, Սյունիք, Սևաքար, Չափնի և Գեղանուշ գյուղերը: Համայնքապետարանն ուշադրության կենտրոնում է պահում Կապան համայնքի բոլոր բնակավայրերի, այդ թվում՝ ազդակիր բնակավայրերի խնդիրները և միջոցներ ձեռնարկում դրանց լուծման ուղղությամբ:

Ներկա պահին կարևոր է Արծվանիկ գյուղի բուժկետի և Սյունիքում նոր նախատեսվող մանկապարտեզի բուժկետի գույքով համալրումը, քանի որ Արծվանիկ և Սյունիք գյուղերը համայնքի խոշոր գյուղերից են, 2-ն էլ սահմանամերձ, որտեղ գործում են և՛ դպրոց, և՛ մանկապարտեզ:

Բնապահպանական առումով հիմնախնդիր է Վաչագան գետի մի հատվածի անբարեկարգ վիճակը, քանի որ նախորդ տարիների ընթացքում Վաչագան գետի մյուս երկու հատվածները մաքրվել և բարեկարգվել են, իսկ քաղաքով հոսող ամենավերևի հատվածը մնացել է անբարեկարգ, ինչը բացասական ազդեցություն է ունենում ջրային էկոհամակարգի վրա:

7. **Կապը տվյալ մարզի կամ համայնքի զարգացման կամ շրջակա միջավայրի պահպանության տեղական գործողությունների ծրագրերի կամ այլ ծրագրային կամ ռազմավարական նշանակության փաստաթղթերի կամ շրջակա միջավայրի կամ առողջապահության ոլորտներում համայնքի առաջնահերթություններից բխող առաջարկությունների հետ** – Ծրագիրը համապատասխանում է Կապան համայնքի 2021-2026 թվականների հնգամյա զարգացման ծրագրին և 2024-2026թթ միջնաժամկետ ծախսերի ծրագրին:

8. **Տեղեկատվություն՝ Ծրագրի իրականացմանը պետական կառավարման համակարգի մարմինների կամ այլ կազմակերպությունների /այդ թվում՝ միջազգային/ մասնակցության վերաբերյալ** – առկա չէ

9. **Տեղեկատվություն Ծրագրի շահառուների վերաբերյալ** – Առողջապահական ծրագրի մասով ծրագրի շահառու են հանդիսանում Արծվանիկ գյուղի 819 բնակիչները, Սյունիք գյուղի մանկապարտեզի ներկայիս սաները և աշխատակիցները, ինչպես նաև նոր ՆՈՒՀ-ի կառուցման արդյունքում նոր ավելացող սաները և աշխատակիցները, ընդհանուրը՝ 83 մարդ, այսինքն առողջապահական միջոցառումների մասով՝ 902 շահառու:

Բնապահպանական միջոցառումների մասով շահառու են համարվում Կապան համայնքի ամբողջ բնակչությունը՝ 44 529 մարդ, քանի որ գետի ներկայացված հատվածը գտնվում է Գարեգին Նժդեհի հուշահամալիրի և Բժշկական կենտրոն տանող ճանապարհին կից: Հաշվի առնելով կոյուղագծի կառուցման հանգամանքը, ծրագրի իրականացումը հատկապես դրական ազդեցություն կունենա հարևանությամբ գտնվող անհատական բնակելի տների բնակիչների վրա:

Մաքրված և բարեկարգված գետը դրական ազդեցություն կունենա Կապան քաղաքի ընդհանուր տեսքի վրա:

10. **Տեղեկատվություն Ծրագրի համաֆինանսավորման վերաբերյալ /առկայության դեպքում/** - Ծրագրի ֆինանսավորումը նախատեսվում է իրականացնել պետական և համայնքային բյուջեների համաֆինանսավորմամբ, պետական բյուջեի գումարը կազմում է 233 298 470 ՀՀ դրամ, որն ամբողջությամբ կուղղվի բնապահպանական միջոցառումների իրականացմանը, համայնքի բյուջեի համաներդրման մասը առողջապահական միջոցառումների մասով կազմում է 800 000 ՀՀ դրամ: Բնապահպանական միջոցառումների հստակ գումարը հնարավոր կլինի նշել նախագծանախահաշվային փաստաթղթերը կազմելուց հետո:

11. **Ծրագրի կատարողականի կանխատեսումը /քանակական և որակական ցուցանիշներ՝ ըստ առանձին միջոցառումների/** - առողջապահական միջոցառումների մասով 2 բուժկետ՝ Արծվանիկ գյուղի և Սյունիքի ՆՈՒՀ-ի, կհամալրվեն անհրաժեշտ գույքով և պարագաներով /ցանկը կցվում է/, հնարավորություն կընձեռնվի առաջին բուժօգնությունն ապահովել պատշաճ մակարդակով: Բնապահպանական մասով՝ կմաքրվի գետի 730 մետր հատվածը, կիրականացվի գետի հունի մաքրում թփուտներից՝ 0,576 հա հատված, գետի հունի ամրացում քարե սալարկով, գետի հունի ամրացում, աջակողմյան հենապատի շապիկի իրականացում, ձախակողմյան հենապատերի իրականացում, կոյուղագծի կառուցում, նոր հետապատերի կառուցում և այլն: Ըստ առանձին միջոցառումների քանակական ցուցանիշները հստակ կլինեն նախագծանախահաշվային փաստաթղթերի առկայության դեպքում:

12. **Ծրագրի իրականացումից ակնկալվող արդյունքները /կարճաժամկետ և երկարաժամկետ/** - Առողջապահական միջոցառումների մասով ակնկալվող արդյունքը պատճաշ մակարդակով առաջին բուժօգնության տրամադրումն է լինելու թե՛ Արծվանիկի բուժկետում, և թե՛ Սյունիքի ՆՈՒՀ-ում: Բնապահպանական միջոցառումների մասով արդյունքը կլինի բարելավված ջրային էկոհամակարգը, առկա կոյուղին, էսթետիկ և ակնադիտական դրական ազդեցությունը, քաղաքի գեղեցիկ տեսքը, բնակիչների անվտանգ տեղաշարժը և այլն:

13. **Ծրագրում ներառված միջոցառումների իրականացման համար անհրաժեշտ թույլատվական փաստաթղթերի պատճենները կամ տեղեկատվություն դրանց ստացման ուղղությամբ իրականացող կամ իրականացվելիք աշխատանքների վերաբերյալ** – որպես քաղաքաշինական կառույց նախատեսված է քաղաքաշինական գործունեություն ծավալել 1490 քառ. մետր կառուցապատման մակերեսով, որն օրենսդրությամբ սահմանված կարգով ենթակա չէ ՇՄԱԳ փորձաքննության, սակայն համայնքի նախաձեռնությամբ նախատեսվում է իրականացնել նաև ՇՄԱԳ փորձաքննություն:

Մնացած թույլտվությունները ձեռք են բերվելու ՀՀ օրենսդրությամբ սահմանված ժամկետներում՝ աշխատանքների իրականացման փուլից առաջ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԳԵՎՈՐԳ ՓԱՐՍՅԱՆ

Աղյուսակ

Կապան համայնքի 2025 թվականի բնապահպանական և առողջապահական ծրագրերում ընդգրկված միջոցառումների իրականացման առաջնայնությունները

N	*Միջոցառման անվանումը*	*Գումարը*	*Պետական բյուջե*	*Այլ*	*Համամասնությունը %*
I	***ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ***	***233,298,470***	***233,298,470***	***0***	***99.68***
1	Կապան քաղաքի Վաչագան գետի հունի մաքրում, նոր հենապատերի կառուցում, առկա հենապատերի վերականգնում և Վաչագան գետի ավազանի էսթետիկ տեսքի ձևավորում /Նժդեհի հուշահամալիրի շրջակա հատվածից մինչև <<Կապանի բժշկական կենտրոն>> ՓԲԸ-ի հարակից կամուրջ/	233,298,470	233,298,470		
II	***ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ***	***740,000***		***800,000***	***0.32***
1	Արծվանիկ բնակավայրի բուժկետի գույքով համալրում, այդ թվում՝	400,000		400,000	
1.1	Առաջին բժշկական օգնության պահարան՝ անհետաձգելի բժշկական օգնության հավաքածուով ու առաջին բուժօգնության պայուսակ, սեղան, աթոռներ, բժշկական թախտ, տոնոմետր, բժշկական ջերմաչափ	400,000		400,000	
2	Սյունիքի ՆՈՒՀ-ի բուժկետի գույքով համալրում, այդ թվում՝	340,000		400,000	
2.1	Սեղան, աթոռներ, հասակաչափ, կշեռք, բժշկական թախտ, տեսողության ստուգման աղյուսակ, տոնոմետր, բժշկական ջերմաչափ, ապակե պահարան և առաջին օգնության դեղորայքի և պարագաների հավաքածու ու նախադպրոցական ուսումնական հաստատությունների բուժկետում անհրաժեշտ դեղեր /ՀՀ առողջապահության նախարարի 2023 թվականի դեկտեմբերի 8-ի թիվ 5889-Լ հրամանով հաստատված ցանկին համաձայն/	340,000		400,000	
	ԸՆԴԱՄԵՆԸ	***234,038,470***	***233,298,470***	***800,000***	***100***

Աշխատակազմի քարտուղար **Նելլի Շահնազարյան**

Համաձայնեցված է
Շրջակա միջավայրի նախարար
(լիազոր մարմնի անվանումը)
Հակոբ Սիմիդյան
(ստորագրություն,անուն ազգանուն)
«4» հունիսի 2024թ.

Հավելված
Կապան
համայնքի
2025 թվականի
բնապահպանական ծրագրի

ԿԱՊԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԾՐԱԳՐՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԱՌԱՋՆԱՅՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հ/Հ	ՄԻՋՈՑԱՌՄԱՆ ԱՆՎԱՆՈՒՄԸ	ԳՈՒՄԱՐԸ (հազ. դրամ)
	ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ	233,298.5
	Վաչագան գետի հունի մաքրում, նոր հենապատերի կառուցում, առկա հենապատերի վերականգնում և Վաչագան գետի ավազանի էսթետիկ տեսքի ձևավորում՝ Նժդեհի հուշահամալիրի շրջակա հատվածից մինչև «Կապանի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի հարակից կամուրջ	233,298.5
ԸՆԴԱՄԵՆԸ		233,298.5

Համաձայնեցված է

Հայաստանի Հանրապետության

Առողջապահության նախարար

Անահիտ Ավանեսյան

27.06.2024

X

ԱՆԱՀԻՏ ԱՎԱՆԵՍՅԱՆ

Signed by: AVANESYAN ANAHIT 7103810157

«_____» _____ 2024թ

Հավելված

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի

Կապան համայնքի 2025 թվականի

բնապահպանական ծրագրի

Կապան համայնքի 2025 թվականի բնապահպանական ծրագրով նախատեսված միջոցառումների իրականացման առաջնայնությունները

N	*Միջոցառման անվանումը*	*Գումարը*	*Պետական բյուջե*	*Այլ*	*Համամասնությունը %*
I	*ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ*	*233 298 470*	*233 298 470*	*0*	*99,68*
1	Կապան քաղաքի Վաչագան գետի հունի մաքրում, նոր հենապատերի կառուցում, առկա հենապատերի վերականգնում և Վաչագան գետի ավազանի էսթետիկ տեսքի ձևավորում /Նժդեհի հուշահամալիրի շրջակա հատվածից մինչև <<Կապանի բժշկական կենտրոն>> ՓԲԸ-ի հարակից կամուրջ/	233 298 470	233 298 470		
II	*ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ*	*740 000*		*800 000*	*0,32*
1	Արծվանիկ բնակավայրի բուժկետի գույքով համալրում, այդ թվում՝	400 000		400 000	
1,1	Առաջին բժշկական օգնության պահարան՝ անհետաձգելի բժշկական օգնության հավաքածուով ու առաջին բուժօգնության պայուսակ, սեղան, աթոռներ, բժշկական թախտ, տոնոմետր, բժշկական ջերմաչափ	400 000		400 000	

2	Սյունիքի ՆՈՒՀ-ի բուժկետի գույքով համալրում, այդ թվում՝	400 000		400 000	
2,1	Սեղան, աթոռներ, հասակաչափ, կշեռք, բժշկական թախտ, տեսողության ստուգման աղյուսակ, տոնոմետր, բժշկական ջերմաչափ, ապակե պահարան և առաջին օգնության դեղորայքի և պարագաների հավաքածու ու նախադպրոցական ուսումնական հաստատությունների բուժկետում անհրաժեշտ դեղեր	400 000		400 000	
ԸՆԴԱՄԵՆԸ		*234 098 470*	*233 298 470*	*800 000*	*100*